Թէեւ այս խօսքերը Մարօն արտասանեց խիստ պինդ համոզմունքով, այսոամենայնիւ ես չէի կարողանում հաւատացնել ինձ, թէ մի զառամեալ անապատական աբեղայ կարող էր Ասլանը լինել: Բայց Մարօն հաստատեց իր խօսքը մի ուրիշ փաստով, որ շատ հաւանական էր: Նա յիշեցրուց ինձ այն նկատողութիւնը, որ արել էր նա, երբ առաջին անգամ տեսաւ պառաւ կախարդին եւ փոքրիկ Հիւբբիին, որ նստած ժայռի վրայ, ուխտաւորների համար գուշակում էր: Նա այն ժամանակ ասաց. «Կարօն կամ նրա ընկերներից մէկը պէտք է այստեղ լինի». եւ աւելացրեց, թէ «Այն պառաւն իսկոյն յայտնւում է այնտեղ, ուր նրանք լինում են»: Եւ ես այսօր միթէ չէի՞ տեսել միեւնոյնը, երբ «Կաթնաղբիւրի» ձորում ծպտեալ աբեղան միացաւ պառաւ կախարդի հետ եւ համբուրեց Հիւբբիին:

Իմ տարակոյսը փարատուած էր. ես յօժարոեցայ գնալ եւ գտնել «ճգնաւորինէ, բայց մտածում էի մեր վրանը անտէր եւ առանց տղամարդի չթողնել: Երբ այդ մասին յայտնեցի Մարօին, նա պատասխանեց.

— Սուրբ աստուածածինը իր ուխտաւորներին կպահէ, գնա՛ նք:

Ես չհամոզուեցայ: Նա խնդրեց ինձ փոքր-ինչ դրսում սպասել, իսկ ինքը մտաւ վրանի ներսը: Մինչեւ նրա դուրս գալը, ես գտայ վանքի գիւղացիներից մէկին, եւ նրան մի քանի ղուրուշ տալով, պատուիրեցի հսկել վրանին մինչեւ մեր վերադարձը:

Քանի րոպէից յետոյ դուրս եկաւ Մարօն. ես հազիւ կարողացայ ճանաչել նրան. նա փաթաթուած էր մի լայն վանայ աբայի (վերարկոի) մէջ եւ գլխին քրդի ձեւով ապարոշ էր կապել:

— Դա ո՞վ է, — հարցրուց նա, տեսնելով գիւղացուն:

— Ես պատուիրեցի նրան հսկել վրանին մինչեւ մեր վերադարձը:

— Խաթունը արթուն է: Լաւ, գնանք:

Երբ փոքր-ինչ հեռացանք, նա ասաց.

— Դու չես իմանում, Ֆարհատ, նա ինքը կը գողանայ: Այստեղ բոլորն էլ աւազակներ են:

— Վանքի սպասաւորն երկիւղած կը լինի, — պատասխանեցի ես:

— Չէ՛, այդպէս չէ, ես իմ աչքով տեսայ, ինչպէս մի վարդապետ գողացաւ եւ գրպանը դրեց իմ գցած գանձանակը: Նրանք մեզ խաբում են, Ֆարհատ, նրանք այն չեն, որպէս դրսից երեւում են... հայրս շատ է պատմել ինձ նրանց գործերի մասին...

— Քո վերարկոի տակից զէնքի ձայն է լսւում, Մարօ: